պատ քաղաքում՝ Սուրբ Էջմիածինը, Շողակաթը, Սուրբ Գայանեն և Սուրբ Հռիփսիմեն, ինչպես պատմում է առաքինի քարտուղար Ագաթանգեղոսը[176], որ ազգով լատին էր:

Երրորդ՝ Մեծ Ներսեսը՝ Լուսավորչի թոռի թոռը, բազմացրեց եկեղեցիները, և այս էլ ահա պատմում է Բուզանդը[177]:

Չորրորդ՝ թարգմանիչներ Սահակն ու Մեսրոպը բազմաթիվ տեղերում շինեցին եկեղեցիներ, որ պատմում են բոլոր պատմագիրները:

Հինգերորդ՝ Ներսես Շինողը[178], արդեն պարզ է, որ գործով անվանվեց Շինող՝ բազմաթիվ եկեղեցիներ շինելու համար:

Վեցերորդ՝ Մեծ Հայաստանի ու Վրաստանի սպասավոր Զաքարիան*: Սա զորանալով բոլոր ազգերի վերաբերությամբ, որ պատմում է Կիրակոսը, իսկ մենք իր տեղում կպատմենք. սա բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ շինեց գյուղերում ու իր ամբողջ իշխանության մեջ: Ահա եկեղեցիների մասին ասացինք, ինչ որ գիտեինք, ամենը գրեցինք:

ԳԼՈՒԽ Գ
ՕՀԱՆԱՎԱՆՔԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամեն ինչ, որ գրեցինք այս վանքի մասին է, որի մասին պատրաստվել ենք խոսելու: Քանզի շատ պատմագրքեր կարդացի, չկարողացա իմանալ, թե ում կողմից է կառուցվել այս: Սույն պատճառով իմաստուն վարդապետներից որևէ մեկին, որ տեսնում էի, սրա մասին հարցնում էի, ասում էին, թե մենք հնախոսներից իմանում ենք, որ Լուսավորչի կողմից է շինվել Սուրբ Կարապետը: Սրանց հետ թավրիզեցի Առաքել վարդապետը, որ ծանոթ էր բոլոր պատմագիրներին, որը և մեծ Շահ Աբասի կողմից Արարատյան աշխարհի ավերման պատմությունը գրեց. սա պատմեց՝ թե մեր երկիրը լուսավորելուց հետո, Սուրբ Լուսավորիչն ու բարեպաշտ Տրդատը շինեցին Սուրբ Կարապետը և այնտեղ դրին նրա նշխարներից, իսկ իրենք այնտեղ էին ապաստանում ամառային եղանակներին:

* Զաքարիա Սպասալար՝ զորավար հայ-վրաց միացյալ բանակի 12-13-րդ դարերում:

Նաև ասաց իբրև քեզ վկայություն, որ ունի չորս դռներ: Հույները նույնպես են անում՝ չորս դուռ հարավային կողմում են անում, փայտե գավիթ են շինում վրան՝ ռամիկների աղոթքի համար: Մեկ դուռը արևմտյան կողմում, որով քահանաներն են մտնում:

Այսքանը լսեցինք Առաքել վարդապետից, իսկ ունենք և այլ վկա, քանզի մեր օրերում Կոստանդնուպոլսից ուխտավորներ եկան և բոլոր սրբությունները համբուրելուց հետո ասացին՝ ո՞րն է Լուսավորչի խաչը: Մենք ցույց տվինք նրանց արևմտյան դուռը գավթում, խաչը, որ կառուցված է, և ասացինք՝ սրան Լուսավորչի խաչ ենք ասում: Նրանցից մեկը իր գրպաններից հանեց պարան և չափեց խաչի երկայնությունն ու լայնությունը: Մենք հարցրինք պատճառը, և նա ասաց՝ գնացինք Թորդան[179] մեզ մի խաչ ցույց տվին և ասացին՝ այս Լուսավորիչն է շինել և հաստատված է իր հասակի չափով. սրա նման մի հատ էլ կա Կարբի գավառում՝ Օհանավանքի Սուրբ ուխտում: Մենք չափեցինք այն ու այս, ահա ստույգ նման են իրար չափով ու տեսքով: Ուստի և մենք այս լուրով իմանում ենք, որ սա շինված է Սուրբ Լուսավորչի և Մեծ Տրդատի կողմից: Ահա այսքանը ի լրո լսեցինք:

ԳԼՈՒԽ Դ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐՔԵՐԻՑ

Թեպետ ի լրո ստույգ գիտենք, որ սա կառուցվել է Սուրբ Լուսավորչի կողմից, սակայն գրքերից նույնպես փոքրիշատե իմանում ենք, ուստի չնչին խոսքով կգրեմ այն ևս, քանզի Տաթևի կոնդակում գրված է, թե «Մեծ կաթողիկոս Մուշեն[180] գնաց, համբուրեց Տաթևի եկեղեցու դուռը և նստեց: Օհանավանքից, որ Արագածոտնում է, այրու որդուն, որ իր քարտուղարն էր ու գրագիրը, ուղարկեց Երիցակի[181] մոտ»:

Այս Մուշեն Լուսավորչից հետո 60-րդ կաթողիկոսն էր մեր թվականությունից առաջ (խոսքը վերաբերում է 551 թվից առաջ. մեր թվականությունը սկսվում է 551 թվից): Ուստի գիտենք, որ Օհանավանքը շինվել է Սուրբ Լուսավորչի կողմից: Ուրիշ վկայություններ էլ գրքերում գտա: Վանքում (Օհանավանքում) կա Թագավորու-